# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

## ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 26 անդամներ՝

Նիստը վարում էր Ալավերդի համայնքի ղեկավար Արկադի Թամազյանը:

Նիստին մասնակցում էին Ալավերդի համյանքի ղեկավարի տեղակալներ՝ Ա.Աբելյանը, Ս.Վարդումյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Ռ.Դավթյանը, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Ժամը 15-ին նիստը վարողի կողմից ներկայացվեց համայնքի ավագանու նիստի քվորում լինելու վերաբերյալ: Ավագանու նիստը սկսվեց ժամը $15^{02}$-ին:

Համայնքի ղեկավար Արկադի Թամազյանն առաջարկեց, անհրաժեշտությունից ելնելով նիստի ներկայացված օրակարգի նախագծում ներառել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՃՈՃԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՃՈՃԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» հարցերը և օրակարգից հանել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» հարցը և հաստատել օրակարգը:

1. ԼՍԵՑԻՆ – Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի հերթական նիստի օրակարգը՝

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՕՁՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ԵՎ ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՕՁՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ԵՎ ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 35-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

11. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՄԱԴԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 12 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան)*

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԾՈՃԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան*

**16.** ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՃՈՃԿԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*(Զեկուցող. Ա. Թամազյան*

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**2.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի

Խնամակալության եվ հոգաբարձության մարմնի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ջավարյանը, Դ. Ղումաշյանը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» 109-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության եվ հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշման, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով,

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից ստեղծել հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 25-ի «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՀԱՎԵԼՎԱԾ N 4 ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ) N 8-Ա որոշումը,

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 6-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 13-Ա որոշումը, Օձուն համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 11-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 12-Ա որոշումը,

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 13-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՒ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 28-Ա որոշումը,

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 06-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Շնող ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 54-Ա որոշումը,

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց. 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

3. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու և հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին:

(Զեկ.՝ Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ջավարյանը, Դ. Ղումաշյանը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Ստեղծել Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու թվով հինգ մշտական գործող հանձնաժողովներ և հաստատել հանձնաժողովների անհատական կազմերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**4.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ենթակայության Օձունի բժշկական ամբուլատորիա և Շնողի բժշկական ամբուլատորիա համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրություններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին :

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎՈՂՆԵՐ ՉԿԱՆ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի առաջին՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. «Օձունի բժշկական ամբուլատորիա›› համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Կանոնադրության առաջին մասի, «ընդհանուր դրույթներ» բաժնի 1.3-րդ կետում «Օձուն գյուղական համայնքն է» նախադասությունը փոխարինել «Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ, համայնքային կառավարչական հիմնարկն է» նախադասությամբ և «Օձուն համայնքի ավագանու» նախադասությունը «Ալավերդի համայնքի ավագանու» նախադասությամբ:

1.2 Կանոնադրության առաջին մասի, «ընդհանուր դրույթներ» բաժնի 1.4-րդ կետում «Օձուն համայնքի ղեկավարը» նախադասությունը փոխարինել «Ալավերդի համայնքի ղեկավարը» նախադասությամբ:

1.3 Կանոնադրության առաջին մասի, ընդհանուր դրույթներ բաժնի 16-րդ կետում «Շնողի գյուղապետարանը» բառակապակցությունը փոխարինել «Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ, համայնքային կառավարչական հիմնարկ» բառակապակցությամբ

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա›› համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

2.1 Կանոնադրության առաջին մասի, ընդհանուր դրույթներ բաժնի 4-րդ կետում «Շնողի գյուղապետարանն է» նախադասությունը փոխարինել «Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կառավարչական հիմնարկն է» նախադասությամբ:

2.2 Կանոնադրության առաջին մասի, ընդհանուր դրույթներ բաժնի 5-րդ կետում «Շնող» բառը փոխարինել «Ալավերդի» բառով:

2.3 Կանոնադրության առաջին մասի, ընդհանուր դրույթներ բաժնի 16-րդ կետում «Շնողի գյուղապետարանը» բառակապակցությունը փոխարինել «Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ, համայնքային կառավարչական հիմնարկ» բառակապակցությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ , 0 ձեռնպահ:

**5.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ենթակայության Օձունի բժշկական ամբուլատորիա և Շնողի բժշկական ամբուլատորիա համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և 2023 թվականին վճարովի ծառայությունների գները հաստատելու:

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ. Պեպանյանը, Դ,Ղումաշյանը, Ս.Զախարովը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Օձունի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 2-ի:

3. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Օձունի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2023 թվականին իրականացվող վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի N 3-ի:

4. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Շնողի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2023 թվականին իրականացվող վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի N 4-ի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**6.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի N 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «Ալավերդի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2023 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 35-Ա որոշման 1-ին կետում կատարել փոփոխություններ՝ որոշման հավելված 30-ը շարադրել նոր խմբագրությամբ և հաստատել՝ համաձայն հավելված հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Հ.Ձավարյանը:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**7.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս. Զախարովը, Դ. Ղումաշյանը, Ա.Դալլաքյանը, Մ. Պեպանյանը, Հ. Ջավարյանը, Ֆ.Թաթուխաշվիլին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով,

հիմք ընդունելով «Ալավերդու համայնքապետարանի, համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկման հանձնաժողով»-ի թիվ 1 արձանագրությունը՝

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. կողմ 14, դեմ 1, ձեռնպահ 11:

**8.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի 10-րդ փողոցի համարակալման մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի 10-րդ փողոց համարակալել հետևյալ թվային հաջորդականությամբ.

1.1 1-ին փակուղի (սկսվում է 10-րդ փողոցի թիվ 2 տան մոտից մոտ 50 մետր դեպի արևելք):

1.2 2-րդ փակուղի (սկսվում է 11-րդ փողոցի 4-րդ նրբանցքի վերջից ավարտվում է 06-060-0037-0006 ծածկագրի մոտ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**9.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դ. Ղումաշյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի բնակավայրերի (Ալավերդի քաղաք, Ակներ, Աքորի, Ծաղկաշատ, Կաճաճկուտ, Հաղպատ, Ջիլիզա, Ախթալա քաղաք, Ախթալա գյուղ, Առողջարանին կից գյուղ, Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ քաղաք, Փոքր Այրում, Շնող, Թեղուտ, Քարկոփ, Օձուն, Ամոջ, Այգեհատ, Արդվի, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հագվի, Մղարթ)գլխավոր հատակագծի մշակման նախագծման առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**10.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Մադան թաղամասի փողոցների համարակալման մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Մադան թաղամասի փողոցներն անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ.

1.1 1-ին փողոց (սկսվում է փոստային բաժանմունքի մոտից, ավարտվում է 06-002-0324-0009 ծածկագրի վերջնամասում),

1.2 1-ին փողոց, 1-ին նրբանցք (սկսվում է 06-002-0128-0005 ծածկագրի մոտից, ավարտվում է 06-002-0127-0024 ծածկագրի մոտ),

1.3 1-ին փողոց, 2-րդ նրբանցք (սկսվում է 06-002-0461-0001 ծածկագրի մոտից, ավարտվում է 06-002-0457-0002 ծածկագրի վերջնամասում),

1.4 1-ին փողոց, 1-ին փակուղի (սկսվում է թաղամասի 91 բնակելի տան մոտից ավարտվում է 06-002-0127-0096 և 06-002-0127-0097 ծածկագրերի մոտ),

1.5 1-ին փողոց, 2-րդ փակուղի (սկսվում է 06-002-0129-0003 ծածկագրի մոտից, ավարտվում է 06-002-0127-0008 ծածկագրի միջնամասում),

1.6 2-րդ փողոց (սկսվում է 06-002-0126-0001 ծածկագրի մոտից, ավարտվում է 06-002-0127-0104 ծածկագրի միջնամասում),

1.7 2-րդ փողոց, 1-ին նրբանցք (սկսվում է 06-002-0130-0002 ծակագրի միջնամասից, ավարտվում է 06-002-0127-0077 ծածկագրի մոտ),

1.8 2-րդ փողոց, 1-ին փակուղի (սկսվում է 06-002-0130-0001 ծածկագրի մոտից, ավարտվում է 06-002-0127-0047 ծածկագրի միջնամասում),

1.9 2-րդ փողոց, 2-րդ փակուղի (սկսվում է 06-002-0127-0049 ծածկագրի մոտից, ավարտվում է 06-002-0127-0108 ծածկագրի հատման կետում),

1.10 3-րդ փողոց (սկսվում է 06-002-0117-0035 ծածկագրի միջնամասից, ավարտվում է 06-002-0127-0083 ծածկագրի միջնամասում):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**11.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականությունը հանդիսացող թվով 12 տրանսպորտային միջոցները համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրելու մասին ։

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Դ. Ղումաշյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ տրանսպորտային միջոցները՝

1.1 ELAZ-BL 880 մակնիշի, ELAZB1880A20P0520, 2701 LL պետհամարանիշով 2020 թվականի արտադրության էքսկավատորը,

1.2 UAZ 390945-552 մակնիշի, 304 AV 61 պետհամարանիշով , 2020 թվականի արտադրության, բեռնաուղևորատար տրանսպորտային միջոցը,

1.3 KAMAZ մակնիշի, 53605-6010-48, 956 LL 70 պետհամարանիշով, 2020 թվականի արտադրության, բեռնատար տրանսպորտային միջոցը,

1.4 VAZ 21214 մակնիշի, 719 LL 70 պետհամարանիշով, 2004 թվականի արտադրության, թեթև մարդատար տրանսպորտային միջոցը,

1.5 GREYDER DM-14.0 մակնիշի 2177, 2019 թվականի արտադրության անիվավոր, դիզելային տրանսպորտային միջոցը,

1.6 CASE 570 ST մակնիշի 2373 LL պետհամարանիշով 2020 թվականի արտադրության, անիվավոր, դիզելային տրանսպորտային միջոցը,

1.7 GAZ KO-440-1-GAZ-330700-1014 մակնիշի, 716 LL 70 պետհամարանիշով 2008 թվականի արտադրության, աղբատար տրանսպորտային միջոցը,

1.8 MAZ 490143-390 մակնիշի, 614 LL 70 պետհամարանիշով, 2008 թվականի արտադրության, աղբատար տրանսպորտային միջոցը,

1.9 ДТ-75 մակնիշի, 1978 թվականի արտադրության տրակտորը,

անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն » ՀՈԱԿ-ին:

2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող՝

**2.1** JCP 3CX JCP մակնիշի, 3CX4TEJ2668176, 1663 LL պետհամարանիշով 2018 թվականի արտադրության, անիվավոր դիզելային էքսկավատոր տրանսպորտային միջոցը,

**1.2** UAZ 396292-016 296 LL 61 պետհամարանիշով տրանսպորտային միջոցը,

**2.3** UAZ 390944-552 մակնիշի, 289 LL 70 պետհամարանիշով, 2008 թվականի արտադրության,բեռնաուղևորատար,
տրանսպորտային միջոցները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Ալավերդի համայնքի «Ալավերդու բարեկարգում » ՀՈԱԿ-ին՝

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց. 15 կողմ, դեմ (0), 11 ձեռնպահ:

**12.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող հանդիսությունների սրահները օգտագործման տրամադրելու համար վճար մասին :

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Դ.Ղումաշյանը, Գ.Ալլահվերդյանը, Հ.Ղուլյանը, Հ.Զավարյանը, Ս.Զախարովը, Ա.Աղաբաբյանը, Ա. Թամազյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով՝

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հանդիսությունների սրահները օգտագործման տրամադրելու համար սահմանել վճար, միջոցառումների համար 1 /մեկ/ միջոցառումը՝ 20000/ տաս հազար/ ՀՀ դրամ, ներառյալ գազի և էլեկտրաէներգիայի ծախսը, տխրության առիթները կազմակերպել անվճար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց. կողմ 27 , դեմ 0, ձեռնպահ 0:

**13.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 2022 թվականի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով,

հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 14 դեկտեմբերի 2022 թվականի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 39-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ.Զավարյանը, Դ.Ղումաշյանը,

Որոշումն ընդունվեց. 14 կողմ, 12 դեմ , 0 ձեռնպահ:

**14.** ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքի ավագանու 2022 թվականի բյուջեի կատարման չորրորդ եռամսյակի հաշվետվության հաղորդումը հաստատելու մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման չորրորդ եռամսյակի հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ , 0 ձեռնպահ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ.Զավարյանը, Դ.Ղումաշյանը,

**15.** ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ենթակայության «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի առաջին կետի՝

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1 Կանոնադրության առաջին մասի, «ընդհանուր դրույթներ» բաժնի 1.3-րդ կետում « Ալավերդի գյուղական համայնքն է» նախադասությունը փոխարինել «Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ, համայնքային կառավարչական հիմնարկն է» նախադասությամբ և «Ճոճկան համայնքի ավագանու» նախադասությունը «Ալավերդի համայնքի ավագանու» նախադասությամբ:

1.2 Կանոնադրության առաջին մասի, «ընդհանուր դրույթներ» բաժնի 1.4-րդ կետում «Ճոճկան համայնքի ղեկավարը» նախադասությունը փոխարինել «Ալավերդի համայնքի ղեկավարը» նախադասությամբ:

1.3 Կանոնադրության, «Կազմակերպության կառավարումը» բաժնի 3.3-րդ կետում «Ճոճկան համայնքի ղեկավարը» բառակապակցությունը փոխարինել «Ալավերդի համայնքի ղեկավարը» բառակապակցությամբ.

1.4 Կանոնադրության, «Կազմակերպության կառավարումը» բաժնի 3.3-րդ կետում, ա) մասից առաջ, «Ճոճկան համայնքի ղեկավարը» բառակապակցությունը փոխարինել «Ալավերդի համայնքի ղեկավարը» բառակապակցությամբ.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ , 0 ձեռնպահ:

**16.** ԼՍԵՑԻՆ- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ենթակայության Ճոճկանի բժշկական ամբուլատորիա համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի, «Նորմատիվ րավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի N 1-ի:

2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից 2023 թվականին իրականացվող վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի N 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Որոշումն ընդունվեց. 26 կողմ, 0 դեմ , 0 ձեռնպահ:

Նիստն ավարտվեց ժամը $16^{51}$-ին

Ավագանու նիստը հեռարձակվել են առցանց, տեսանկարահանվել և էլ. կրիչով պահպանվում են համայնքապետարանի աշխատակազմում:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. ԹԱՄԱԶՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ՊԱՊՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ԶԱԽԱՐՈՎ ՍԻՄՈՆ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ԹԱՄԱԶՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
6. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
8. ~~ԳԱԼՍՏՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ~~
9. ԱՂԱԲԱԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ
10. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ ԳԱՅԱՆԵ
11. ՌԱՄԱԶՅԱՆ ՄԱՆՎԵԼ
12. ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ
13. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԼԱՈՒՐԱ
14. ՌԱՄԱԶՅԱՆ ԱՐԱՄ
15. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ
16. ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ
17. ՂՈՒԼՅԱՆ ՀԱՄԼԵՏ ՍԵՐՅՈԺԱՅԻ

18. ԵՐԻՑՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԺՈՐԱՅԻ
19. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱԼԲԵՐՏԻ
20. ՉԱՎԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԲԵՐՏԻ
21. ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ ՖԼՈՐԱ ՎԱՆՈՅԻ
22. ՋԱՆԻՆՅԱՆ ԱՄՐԱՍՏԱՆ ՌԱՖԻԿԻ
23. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՐԱՆՏ ՀՐԱՀԱՏԻ
24. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՐՇԱՎԻՐԻ
25. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ
26. [illegible]

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՍՏՅԱՆ